

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը

(Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջան, 01.03.1999թ. դրությամբ)

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից 33 Ազգային վիճակագրական ծառայությունը 2000թ. հունվար-դեկտեմբերին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 10 ցուցանիշների վերաբերյալ.

1. Մշտական բնակչության¹ թվաքանակն ըստ սեռի

(հազ. մարդ)

	Ամբողջ բնակչությունը	Կին	տղամարդ
2000թ. հունվարի 1-ի դրությամբ	3803.4	1954.4	1849.0
2001թ. հունվարի 1-ի դրությամբ	3802.4	1953.9	1848.5

2. Կյանքի սպասվելիք տևողությունը հաշվարկված ծննդից՝ ըստ սեռի 1999թ.²

(տարի)

Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
73.2	75.5	70.7

3. Մանկամահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)

(1000 կենդանածնի հաշվով)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
1999թ. հունվար-դեկտեմբեր	15.4	13.4	17.2
2000թ. հունվար-դեկտեմբեր	15.6	13.6	17.4

4. Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)

(1000 կենդանածնի հաշվով)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
1999թ. հունվար-դեկտեմբեր	19.2	17.3	20.9
2000թ. հունվար-դեկտեմբեր	19.4	17.5	21.1

5. Մայրական մահացության գործակիցը 100000 կենդանածնի հաշվով 1999թ. կազմել է 32.9 (12 դեպք), 2000թ. հունվար-սեպտեմբերին՝ 50,9 (13 դեպք), իսկ 2000թ. հունվար-դեկտեմբերին 52.7 (18 դեպք):

¹ Առկա բնակչության թվաքանակն արտագաղթի հետևանքով զգալիորեն պակաս է: Առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի վերաբերյալ արժանահավատ տվյալները բացակայում են արտագաղթի թերհաշվառման հետևանքով: Արտագաղթի մի մասն արտացոլող առավել արժանահավատ տվյալներ առկա են միայն օդային տրանսպորտով մեկնողների և ժամանողների ցուցանիշների տարբերության գծով: Ըստ 33 քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից իրականացվող ուղևորափոխադրումների հաշվառման տվյալների, 1992-2000թթ. հանրապետությունից մեկնողների թվաքանակը մոտ 644 հազ. մարդով գերազանցել է ժամանողների թվաքանակը: Հարկ է նշել, որ սկսած 2000թ. մայիս-հունիսից տեղեկություններ են ստացվել նաև երկաթգծով և ավտոտրանսպորտային միջոցներով (ավտոբուսներով, երթուղային տաքսիներով և թեթև մարդատար մեքենաներով) ուղևորափոխադրումների վերաբերյալ:

² Կյանքի սպասվելիք տևողության հաշվարկի համար հիմք են հանդիսանում տվյալ տարվա մահացության սեռատարիքային գործակիցները, ընդ որում նշանակալից է մինչև 1 տարեկան հասակում մահացության մակարդակը:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

6. Ըստ ՀՀ ԱԿԾ և ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2000թ. հոկտեմբեր-նոյեմբերին համատեղ իրականացված «Ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտության» նախնական տվյալների, ընտրանքի մեջ ներգրավված 4198 ամուսնացած կանանց 60.5%-ն օգտագործել է **հակաբեղմնավորիչներ**:

7. **Ուսումնառության միջին տևողությունը դպրոցներում** 2000/2001 ուսումնական տարում կազմել է 10 տարի:

12. **ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով** 2000թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 271502 դրամ կամ 503 ԱՄՆ դոլար:

14. **Պաշտոնական գործազրկության մակարդակը** 2000թ. դեկտեմբերին կազմել է 10.9 տոկոս և 1999թ. նկատմամբ նվազել 1.0 տոկոսային կետով: Ընդ որում, կանանց պաշտոնական գործազրկության մակարդակը 2000թ. դեկտեմբերին կազմել է 13.9 տոկոս և 1999թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել 1.2 տոկոսային կետով, իսկ տղամարդկանց պաշտոնական գործազրկության մակարդակը կազմել է 7.8 տոկոս և նվազել 0.8 տոկոսային կետով:

15. 2000թ. հունվար-դեկտեմբերին **տնտեսության մեջ զբաղված** է եղել ՀՀ ողջ բնակչության 33.7 տոկոսը, այդ թվում կանայք՝ 32.2 տոկոս, տղամարդիկ՝ 35.5 տոկոս: